ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/192» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գրքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 «09» հոկտեմբերի 2024 թ.,
ժամը 12:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ ՝
Մ. Գաբրիելյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),
հանձնաժողովի անդամներ ՝
Հ. Մխոյան ՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
Հ. Աբովյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
հանձնաժողովի քարտուղար ՝
Ա. Աղուզումցյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. Տեղեկատվություն՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/192» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդների համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2024 թ-ի հոկտեմբերի 04-ին, ժամը 11:00-ին:

Գնման ընթացակարգի հակադարձ աճուրդը մեկնարկել է 2024 թ-ի հոկտեմբերի 07-ին, ժամը 11:00 ավարտվել հոկտեմբերի 07-ին ժամը 11:30-ին:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե, հեռ.
1	Սարգսյան Թրեյդ ՍՊԸ	էլ. հասցե՝ sargsyant99@mail.ru հեռ.՝ 093-870222, 010-262575
2	Միեր Թումանյան Արայիկի ԱՁ	հեռ.՝ 043 494991

3. Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին.

Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդում մասնակիցները ներկայացրել են հետևյալ վերջնական գնային առաջարկները.

Չափա-բաժնի համար	Չափաբաժնի անվանումը	Զբաղեց-րած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգա-վիճակ*
					Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Գիրք 1	1	Սարգսյան Թրեյդ ՍՊԸ	30000	29000	0 %	29000	
		2	Միեր Թումանյան Արայիկի ԱՁ	30000	29390	0 %	29390	
2	Գիրք 2	1	Սարգսյան Թրեյդ ՍՊԸ	17000	16450	0 %	16450	
		2	Միեր Թումանյան Արայիկի ԱՁ	17000	16650	0 %	16650	

* Մերժման հիմք՝ նախահաշվային գնի գերազանցում:

4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցում չի եղել:

6. Տեղեկատվություն հակադարձ աճուրդի արդյունքում (յուրաքանչյուր չափաբաժնի մասով)

ընտրված մասնակիցներից ստացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, հրավերի պահանջներին դրանց համապատասխանության մասին:

Սարգսյան Թրեյդ ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն Դիմում-հայտարարությունը լրացված էր թերի: Մասնակցին 07.10.2024 թ. տրվել է հնարավորություն շտկել թերությունը: Օրենքով սահմանված ժամկետում մասնակիցը կատարել է շտկում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Տեղեկատվություն գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և/կամ չշտկման մասին

Գնահատման ընթացքում արձանագրվել է, որ Սարգսյան Թրեյդ ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված Դիմում-հայտարարությունը լրացված էր թերի, Օրենքով սահմանված ժամկետում մասնակցին տրվել էր հնարավորություն կատարել շտկում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տեղեկատվություն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած /ընտրված/ ճանաչել՝

N	Մասնակցի անվանում	Չափաբաժնի համար
1	Սարգսյան Թրեյդ ՍՊԸ	1, 2

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Տեղեկատվություն գնահատման արդյունքների մասին

9.1. Հանձնաժողովը որոշեց՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ 1, 2-րդ չափաբաժինների համար և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ ԷԱՃ-ի կազմակերպման կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Մ. Գաբրիելյան _____
ստորագրություն

Անդամներ՝ Հ. Մխոյան _____
ստորագրություն

Հ. Աբովյան _____
ստորագրություն

Քարտուղար՝ Ա. Աղուզումցյան _____
ստորագրություն